

ՊԱՆՈՒՆԻ

Յարեհան ԳԼԵ Կ. Պոլսոյ Կ. 10 ՄԵՃ.
Պաւստոս 12 »
Վեցան. Կ. Պոլսոյ 3 »
Պաւստոս 6 »
Ստար երկիրներու 21/21.
Մանուկան տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրսէ, երկու անգամի հա-
մար 2 դուրսէ. աւելի անգամներու
համար զատ սահմանափակ չի
լայ :
Խորքանշիւք թիւ 40 Կարա արծ :



ԼԵՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱՉՕՐԵԱՅ

ԲԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼ 25 ՅՈՒՆԻԱՐ

ԲԱՂԱՔԱԿԱՆ

Բարեկրօնական խնդրոյն վրայ
Յունաց Պատրիարքն անցեալները Բ.
Դրան թաղիւր մը ներկայած էր, զոր
արդէն նշանակած էինք : Այն թաղ-
րիւրն մէջ Յունաց Պատրիարքը թուր-
քիոյ կրած անակնկալ ձախողութիւն-
ներն անցեալ սխալմանց արդիւնք կը
համարէ : Վարչութիւնն ընդհանրա-
պէս այնպիսի կէտի մը հասած է, կը-
սէ, որ մեծ ազեակոյ նախաշաւիկ ե-
ղող ծանր անհանգստութիւններ կը
ստանաւ :

Յունաց Պատրիարքը՝ թուրքիոյ
Քրիստոնեայ հասարակութեանց ա-
մենէն բազմաթիւ և կարեւորագոյնին
իւր հողերը գլուխը պարտք կը հա-
մարի ծանուցանել թէ ամենէն ազ-
գու և վերկարար միջոցները միայն
կրնան դժբաղդութիւններն հեռա-
ջընել : Մէք չեմք կարծեր որ Յոյն
հասարակութիւնը թուրքիոյ քրիս-
տոնեայ հասարակութեանց ամենէն
բազմաթիւն եղած լինի, թէպէտ և
Յունաց Պատրիարքին թաղիւրը խըմ-
բազրոններն այնպէս կըսեն՝ Յունա-
կան տարրին աւելի կարեւորութիւն
մը տալու համար :

Ինչ որ է, դայով Յունաց Պատ-
րիարքին խնդրանոց, ամենէն յառաջ
կը յուսայ որ կայսերական կառավա-
րութիւնն իւր նոր ձեռնարկած բա-
րենորդմանց գործին մէջ Սրբառքս
հասարակութեան տիրող օրինաց և
Սրբեկեան Օրթոտոքս եկեղեցւոյ ար-
տօնութեանց ու իրաւաւորութեանց չը
դպչիր : Ուրիշ հասարակութիւնք ալ
միևնոյն բաղձանքն ու իրաւունքն ու-
նին : Այս իրաւասութեան համեմատ,
Օրթոտոքս եկեղեցին պիտի շարու-
նուկէ իւր ապագայ ազատութիւնը
վայելել, իւր կղերին, իւր և կամակի,
եկեղեցեաց, վանքերու, մարդասի-
րական հաստատութեանց և կայուա-
ծոց, ինչպէս նաև ամուսնութեան,
կնամթողութեան, կտակի, օրերու
ստացուածոց վարչութեան և Մեռ-
րապօրաց տեղական ժողովներու
մէջ նստելու իրաւանց նկատմամբ :
Կայսերական կառավարութիւնն այս
ամեն կէտերուն վրայ իւր ազդու
պաշտպանութիւնը տուած է և պի-
տի տայ :

Նկատողութեան արժանի է որ
վերջինչեալ կէտերն Յունական Պատ-
րիարքարանին իրաւասութեան գր-
խառն հիմունքն են, ինչպէս նաև
ուրիշ ազդաց : Յոյները կաթողիկոս-
նորութիւնն ընդունած են, որ Պատ-
րիարքարանին միջոցաւ կը գործադրէ
Հայոց Պատրիարքարանն այս սովո-
րութիւնը չընդունելով՝ հարկաւ մեծ
կորուստ մը չընեն, այսու ամենայնիւ :

քրիստոնէից ամուսնութեան վերա-
բերեալ խնդիրը Պատրիարքարանոց
իրաւասութեան ենթակեալ լինելով,
ասոնց համար ազգային օրէնքի մը
հաստատութիւնն անհրաժեշտ կը-
րելի : Միևս ամեն կէտերն հաւաստ-
րապէս գործադրելու իրաւունք ու-
նի նաև Հայոց Պատրիարքարանը :
Բայց որքեքու ստացուածոց և կրտա-
կաց նկատմամբ հաստատուն օրէնք-
դրութիւններ պէտք են, կայսերա-
կան կառավարութեանն վաւերաց-
եալ :

Յունաց Պատրիարքը նաև կա-
տարեալ հաւատարմութիւն կը պա-
հանէ ամենայն կերպիւ, և օրինակի
համար կառավարիչ որ դաւառի մը
բնակչաց մեծագոյն մասին խօսած լը-
ղուն իւր ուղղածական լեզու ըն-
դունով՝ Օսմանեան պաշտօնական
լեզուին հաւասար կերպիւ : Յոյներն
այս նկատմամբ անհամեմատ առա-
ւելութիւն ունին, վասն զի Եւրոպա-
կան թուրքիոյ դաւառաց և կղերաց
մէջ հոծ ժողովուրդ մը կը կազմեն
և մեծամասնութիւնը պահած են,
որով այսօր իրաւունք ունին քաղա-
քականացէս՝ յանուն մեծամասնու-
թեան խօսելու : Հայը կրնան նոյնպէս
տեղ տեղ մեծամասնութիւն ունենալ
բայց արդեօք դայն լաւ պահելու հա-
մար պէտք եղած խնամքը կը տանի՞ն,
և միթէ դաղթականութիւնն ու պան-
դըլտութիւնն իրենց զննասկար ազ-
դեցութիւնն ամեն օր չ'են զործ-
քներ :

Յունաց պատրիարքը կը խնդրէ
նաև որ դաւառանոց անդամները
դաւառի մը բնակչաց զանազան տա-
րերաց թուոյն և ընդունակութեան
համեմատաբար դուրին, լաւ ոտի-
կանութիւն մը կազմուի, պաշտօնա-
տարները պէտք եղած հանգաման-
քն ունեցող մարդոցմէ անուանին,
և ընտրութիւններն իրօք ժողովուր-
դը ներկային : Այս ամեն խնդիրնե-
րուն մէջ միշտ մեծամասնութեան ըս-
կըցունքը միւր առէլը կըսէ : Վեր-
բանանութիւնը շատ անդամ ամենէն
լաւ կազմակերպեալ երկիրներու մէջ
անդամ կորուստներ կ'ընեն և մեծա-
զոյն մասին կամքը կը տիրէ, այնպէս
որ՝ Եւրոպիոյ մէջ անդամ վերբանա-
նութեանց իրաւունքը պաշտպանելու
միջոցները քաղաքացիաց լուրջ խոր-
հրդածութեան առարկայ եղած են :
Գործադրաբար այս կէտը տակաւին
լստ արժանաւոր Հայ ժողովուրդեան
ուշադրութիւնը գրաւած չ'է :

ՏՈՒՐԻ. ԲԵՐԼԻՆԻ ԵՒ ԱՆՎԵՐՏ ԶՈՃՊ.

Բ. Մանուկանքն Անգլիական Եկեղեցւոյն

(Նոր տես թիւ 2852)

“Ձեր վսեմութիւնը կը պնդէ թէ
ոստիկանութիւնն իրաւունք ունի ձեր

բաղաւթ օտարազգիներ, և թէ իրեն
համար պէտք եղած միակ բանը՝ դեռ
պանտալոն կամ հիւպատոսարանին
տեղեկութիւն տալ էր՝ եթէ Տօքթ.
Քէօլլէր 24 ժամ բանտարկուէր : Ու-
տիկանութեան համար այս կերպիւ
Ձեր վսեմութեան պահանջած իրա-
ւունքն ո՞ր դաշնադրութեան, ո՞ր
հիւպատոսական պայմանագրութեան
կամ ո՞ր օրինաց վրայ հիմնեալ է : Իս-
կաւունք ունի՞մ հաւատարմութէ ոչ
միայն իմ կառավարութիւնս, այլ նա-
և ուրիշ կառավարութիւնք այդպի-
սի պահանջման մը դէմ բացորոշա-
պէս և ազդուապէս պիտի բողոքեն :
Այնպէս պէտք է արդեօք հասկը-
նամ թէ թուրք ոստիկան մը, առանց
մասնաւոր հրամանի, առանց օրինա-
կան իշխանութեան, կրնայ փողոցին
մէջ Անգլիացի հայտաւել մը ձերբա-
կալել, զայն խուզարկել, անոր վրայ
գտնուել կարելի եղած թուղթերն,
որք անոր ստացուածքն են, բռնի
գրաւել, և թուրքական հասարակ
բանտի մը մէջ 24 ժամ վար դնել
զայն՝ առանց թող տալու որ հա-
ղորդակցի իւր գեւադանատան կամ
հիւպատոսարանին հետ. և արդարեւ
թիւն խնդրելու իրաւունք ունե-
նայ : Ձեմ կարծեր որ այդպիսի
պահանջման մը հաւանութիւն տուող
կառավարութիւն մը գտնուի, պա-
հանջում մը, որ “քաղաքակիրթ եր-
կիրներու ընդհանուր օրինաց” և
Բ. Դրան միջադպրային պարտաւորու-
թեանց” համաձայն լինելէ խիստ հե-
ռի է, ինչպէս սակայն կարծած էր
Ձեր վսեմութիւնը : Կիմանամ թէ ճշ-
մարիտէ որ գործնականութեան մէջ
օտարազգիք ձերբակալուած են իր-
բն. ոճրագործ՝ յանցանքը գործած
վայրկենին կամ ներքին պարտաւախ-
մը, և իրենց հիւպատոսական իշխա-
նութեանց ձեռք յանձնուելէ առաջ
24 ժամ վար գրաւած են : Այսու ա-
մենայնիւ, այդ գործածութեան օրի-
նաւորութիւնն երբեք պաշտօնապէս
չէ ճանչուած : Բայց այն բանն որ թուրք
իշխանութիւնք ընելու բնաւ իրա-
ւունք չունենին, Տօքթ. Քէօլլէրի պա-
յուսակը բռնի բանալ և անոր մաս-
նաւոր ստացուածքն եղող բաներ
վերցնել ու պահելն էր : Այնպէս առաջ,
իշխեալ իշխանութիւնք պարտաւոր
էին դեպքանատան կամ հիւպատո-
սարանին տեղեկութիւն տալ և խընդ-
րել որ պայուսակին բացման և լեզ-
վոյ ըննութեան միջոցին դեպքա-
նատան թարգման մը ներկայ դրա-
նուի :

“Ձեր վսեմութիւնը կըսէ թէ ոչ
յաւմար, ոչ ալ հարկաւոր պիտի լի-
նի Տօքթ. Քէօլլէրի վրայ բռնուած
գիրքերուն և ձեռագրաց պարունա-
կութեան քննութեանը մտեալ, քա-
նի որ ես կրնամ հասկնալ թէ գոր-
ծըն ոչ Աստուածաշուքի, ոչ ալ Անգ-

լիական Ազօթագրքին թարգմանու-
նութեանը վրայ էր : Ընդհակառակն
եւ իմացայ սակայն թէ Անգլիացի ե-
կեղեցւոյ Ազօթագրքը (կամ Ժամեր-
դութեանց գիրքը) կը թարգմանուէր
Տօքթ. Քէօլլէրէն առնուած երկու
ձեռագրերէն մին՝ այդ Ազօթագրքին
կամ Ժամացույցութեան գրքին մէկ
մասին իւր ձեռք թարգմանութիւնն
էր, մեծ մասամբ Անգլիկներէն, որ
Անտարաններն, Առաքելաց թուղթե-
րն և Մարգարէներ կը պարունակէր :
Միևս ալ “Քրայսթ Գոթ Ուեզ” (Քրիս-
տոս Բանն (Աստուծոյ) անուն Անգ-
լիկներ գրուած թուրքերէն թարգ-
մանութիւնն էր :

“Տօքթ. Քէօլլէր իւր վրայապալ
գիրք չունէր, և այն գրուածը, զոր
Ձեր վսեմութիւնը կ'ամբաստանէ իր-
բն “սատիկ քննադատութիւն” մը
պարունակող՝ Մահմետական կրօնի
պատուիրանաց դէմ, այդ գրուածը,
կըսեմ, քաղաքագողի Տօքթ. Քէօլլէ-
րի թղթոց մէջ գրուած էր՝ անոր դէմ
այս ապացոյցը գտնելու համար, ինչ-
պէս ծանուցի արդէն մեծ ցաւով :
Ձեր վսեմութիւնը կը յարէ նաև թէ
իշխեալ երկու ձեռագրերը խաւանու-
թեան դէմ աւելի թշնամական ոգ-
ւով մը խմբագրեալ էին : Այդ էն հաս-
տատելի թէ անոնց մին Անգլիական
ազօթագրքի մը մէկ մասին թարգմա-
նութիւնն էր : Իմայն Անոր պարունա-
կութիւնն է՝ քանի մը կարծ ազօթ-
ներէ գատ, այնպիսի գիրքէ մը քաղ-
ւածներ, որ խաւանական թուականէն
շատ առաջ գրուած լինէր, և
նոյն խի խաւանայ կողմանէ ընդուն-
ւած է, այն է Աստուածաշուք գիր-
քը : Միևս, ինչպէս կիմանամ, այն-
պիսի հեղինակութեան մը, որոյ վրայ
կատարեալ փաստութիւն ունիմ թէ
Ձեր վսեմութեան նկարագրած ընդու-
թեամբ ամենեւին բան մը չ'ապրու-
նակեր : Այսոյ պայման լինելուն իրեն
ապացոյց” կրնամ հաստատել թէ իս-
լամ աշխարհի կրօնական ամենաբար-
ձր իշխանութիւնն, որոյ ձեռաց մէջ
գրուած են այդ ձեռագրերը, պարտ-
անձին համարած է չ'ընել բոլոր այն
բառերն, որք խաւանական համար
թշնամական կամ վերաւորել կրնային
նկատուել, և թէ մէկ կամ թերեւս
երկու կարծ հաստատմանէ գատ,
յնչուած միակ բառերն անոնք են,
որք այնպիսի տառերու մը կառույց ֆը-
րիստոսի, որ ընդհանուր կերպիւ կը
գործածուի քրիստոնէից մէջ, և Սուլ-
թանին երկիրներուն մէջ տարած,
տարածուած և կարգաւորած Բա-
նական Հոգեկական կամ Լատինական
վերջապէս բոլոր քրիստոնէական գրք-
ւածոց մէջ կը գտնուի : Բայց ինչպէս
որ Ձեր վսեմութիւնը գրեալ կառույց
անօգուտ է Տօքթ. Քէօլլէրի թղթոց
պարունակութեան քննութեանը մըտ-
նել : Ես կը պնդեմ թէ նոքա ապօրի-

Թիւնն ու բարեկարգութիւնը նշա-
նակութիւն չունին : Անտանի են սը-
րիկաներն , որք Հայհէջ կրտսէն :
Այլ և այլ տեսակ գրամներ կը գը-
նախն , առեւտրական գրամը Գաղղի-
ական տակն է , և լեզուն ալ ընդ-
հանրանալու վրայ է : Օրմ : լիբան 121,
Գաղղիական տակն 106, և ճերմակ
արծաթը 22 3/4 դրուշ են : Տեղւոյս
լիտրը 1000 արտմ է , զոր պղծման
կը կոչեն , իսկ զանիւթայն 80 պղծ-
ման սլոնքն 200 հօխայ : Արմաւաց
յաթին (քիւէ) Շունպըլ կրտսն , որ
85 հօխայ կը քայէ . կայ նաեւ 70 և
75 հօխանոցներն ալ :

Արք և կանայք մեծ մասամբ
Գաղղաֆ (նալըն) կը հագնին մէկ
թիւնն մինչև թիւ ու կէս բարձրու-
թեամբ , մինչդեռ փոքրները կոշի-
կով քայլել փառագուոր է : Բայց հոգ-
չէ թէ կիկնան , կամ ոտքերնին կը
կտարին : որովհետեւ բազմաթիւ է կա-
ղըն ու կըրը , նաեւ մարտնչիկը ըս-
տուար թիւ մը կը կաղընեն : Բարե-
կարգութիւն կը պիտան , բայց չեն
գիտեր թէ ինչ է բարեկարգութիւն-
ը , մինչդեռ կառավարութեան և
Ֆէլէսիէներու բոլոր հրահանգներուն
դէմ կը կենան : Օրինակի համար Ֆէ-
լէսիէին Հայ թէխը քանի մը փոքր-
ներ լապտերներ դրած է գիշերնե-
րը ըստաւորելու համար , ամեն գի-
շեր քանի մը հատ կը կտարին : ու-
րիշ կարգադրութիւններն ալ կա-
րեն , ձիւն եկած օրերն անցնողնե-
րուն ձիւնէ գնդակներ կը նետեն , և
ամենայն գրամական տուգանք մ'առ-
նելով թող կուտան : 30 տարին ան-
գամ մը ձիւն կուգայ . մեր բաղդէն
այս տարի հանդիպեցաւ :

Կրթութիւնը խիստ ծանր կըն-
թանայ հոս : Քրիստոնէից անուաններուն
չափը Տաճիկերէն է , Եւստաֆ , Եւ-
գուպ , Ապտալլա , Խորաճիմ , Եւ-
այս մասին տեղւոյս Հայերն աւելի
դիպչեն և այն ալ շնորհիւ պան-
դուխտներու : Պատկանում թիւնը
մեծ զօրութիւն մը հաստատած է
հոս . յետոյա կըրթուած գերապա-
ծաները , վարդապետներն ու ֆը-
ռէսները ամեն կերպ հոգ կը տա-
նին իրենց ժողովուրդը Լատինացիե-
րով նիւթապէս և բարոյապէս յա-
ռաժ մղելու , իսկ Հայոց տէրապա-
ներն ու վարդապետներն իրենց սո-
րոտակն ուրիշ բան չեն մտածեր . . . :

Մինչդեռ Լատինացիք երկու գի-
շերօթիկ վարժարան ունին մանչ և
աղջիկներու համար , Հայերն երկու
աննշան վարժարան ունին , որոց մէջ
40 աղջիկ և 50 մանչ աղայք միայն
իրը թէ ուսմունք կառնուն , Հիմայ
եկանք մեր նպատակին բուն արմա-
տին որ է վարժարաններն . ուստի
կը խնդրեմ ուշադրութեամբ կար-
դալ : Պատկանում Հայոց , Յունաց ,
Ասորաց , Մաւանաց եւ գաղղացիները
թէն յետադէմ են , բայց իրենց նը-
պատակը կը յառաջանայ Լատինաց
երկու գիշերօթիկ վարժարաններով ,
բնէ է որ ամենք յառաջ կերթան :
Չեմ գիտեր թէ Հայերն ինչ միտա-
ծելով կը քննեն : վարժարան բա-
ռը նշանակութիւն անգամ չունի ,
Լատինաց մանչերու վարժարանը 200
գիշերօթիկ և 50 ցերեկեայ ուսանող
անի , որք կը ունին Յունաբէն ,
Խորաբէն , Մարաբէն , Տաճիկերէն
ալ խիստ մասնաւոր , իսկ Հայերէն
բնաւ չկայ , և որ ցաւալին է , 3-4
հատ Հայոց դասակներ ալ կան , որ
Հայերէնէ պիտան են : Տարեկան
թոշակն է 1700 դրուշ , ամեն կեր-
պի կարգադրելով : Աղջկանց գիշե-
րօթիկը Սէն-ժոզէֆի քոյրերուն ձե-
ռօք բացուած է 24 տարի յառաջ ,
որին 40 աղջիկ գիշերօթիկ , 30 ցե-
րեկեայ , թոշակաւորք կը վճարեն

տարեկան 1700 դրուշ , ցոյրեկանք
կէս թոշակ : 50 ալ աղքատ աղջիկ-
ներու ձրի ուսմունք կուտան : Իւնին
գերաբան մը դպրոցին մէջ , ուսկից
Գիթութեան քոյրերը քաղաքին ամեն
կարգի տղաքաւոր ձրի գեղեր կու-
տան :

Ճամ է խոտաւանիկ ճամբարու-
թիւն մը թէ Գարեբեդի Միսիոնարաց
գիշերօթիկ այն պատուական վար-
ժարաններն , ուր պաշտօնական լեզուն
Հայերէն է և թոշակն է տարեկան վեց
սակի միայն , հոն ուսմունք առնող
տղան կըլլայ ճամբար Հայ . կը սորվի
բարոյականութիւն , Անգլերէն , Ֆը-
ռաներէն , ժիմաւորիք , Թուրքա-
նութիւն եւ մէկ խօսքով Պօլսոյ Բօ-
պէրթ Գօշէֆին տիպարն է : Բայց Հա-
յերը չեն ուզեր անկից օգուտ քա-
ղել . երանի թէ իրենք ունենային
այնպիսի վարժարաններ որ օտարին
կարօտ չլլային , բայց քանի որ չու-
նիմք պէտք է օգուտ քաղելմը : Սըմ-
բատեան ընկերութեան վրայ ուրիշ
սովիւ պիտի գրեմ : Երեւելի է արդ-
եօք առաջարկել ընկերութեանց , որ
աղքատ գիւղերէ աղքատ աղանքներ
ժողովում հոն դրեն , դէթ իրենց
գիւղերուն վարժապետ և վարժու-
հի ըլլալու պայմանաւ , ինչպէս կը-
նեն նաեւ Միսիոնարները : Գոնէ փորձ
մ'ընել : Գարեբեդի Միսիոնարներուն
մէջ կայ Մըսթըր Պարմաւ մ'անուն
պատուական մարդ մը , որ արդարեւ
Հայոց վրայ մեծ երախտիք ունի .
հաղարար մարդկանց կարգաւ դը-
րել կը սորվեցունեն առանց խտրու-
թեան կրօնի . Հայ տղայքները կը-
րակէ և տօնի օրերը Հայոց եկեղե-
ցիները կը դրկեն : Թէ Միսիոնարք
և թէ իրենց տիկինները մեծ խնամք
կը տանէին վարժարանաց վրայ , ուս-
տի կըլին կրեմ որ պէտք է Հայերը
օգուտ քաղեն այն չենքերէն : Գառ-
նամք Հայէպի վարժարաններուն :
40 աղջիկ աշակերտ կայ և միայն մի
վարժուհի , թէն կարող օրիորդ մը ,
բայց ամսականը 125 դրուշ : այսինքն
մէկ սակի . դպրոցին չենքը անյար-
մար նեղ տուն մը , քաջալերող չկայ .
անտես չունի , եւ ամենայն պակա-
սութեամբ : Մանչոց վարժարանին
դպրոցի նման նմին կամ աւելի խեղճ-
մի վարժապետ կայ , թէն գիտական ,
բայց խեղճ աշխարհ կորուսած ըլ-
լալուն՝ միայն օգնական կընայ ըլլա-
լուն թէ գլխաւոր դաստառ , ու-
րիշ մը կայ բռնաւոր : հոգաբարձու
չկայ , նայող չկայ , վերջապէս ողբա-
լու արժանի : Եկամուտին գալով ,
քարալէն կալուածներն այսօր տա-
նէհինք : հազար լիւրայ կարճեն , յաւի
կառավարութեամբ միայն երեք հար-
իւր սակի եկամուտ կըլլայ այն ալ
Նուսրէտաբի հօծողին ոչխարներուն
հաշիւին պէս ամեն տարի երեքսոճեր-
մակութեամբ գալով մը մեծանով
հաշիւը կը մարդու ՄՏ , ո՛՛՛ , վար-
րիկ հաշիւ մ'ալ , որ կը դրեմ ի սոր
որտէ ցաւելով : Գիւղ և քաղաք ուր
որ Բաղդադիան կայ , հինգ անձէն մին
դպրոցն է , այսինքն գիւղ մը որ 15
տուն Բաղդադիան բնակիչ ունի և
ամենքը 100 նոճաւ . աննայն մանչ
աղջիկ 20 աշակերտ կայ դպրոցին :
Կարին և Երզնկայ , միայն քաղաք-
ները հաշիւ ըրած եմ 125ն մէկ ու-
սանող , գիւղերը 20էն մէկ երե-
ցայի , 30էն մէկ Կարնոց գիւղերը .
Գարեբեդի քաղաքը և Բաղաւառ-
նը 145ն մէկ : Գիւղերը 30էն 40էն
մէկ , Զարաիճադ , Գիւր , Տաւրոս
80էն մէկ , Գերման և Բաւն 90էն
մէկ : Ալին և Մարալիք քաղաքները
135ն մէկ : Զմիւռնիայ քաղաքը 105ն
մէկ : Տրապիզոն 115ն մէկ , եւ Հա-
լէպի քաղաքը 35էն մէկ : Բարիշ հաշ-
ւով 105ն մէկ , ահա տիկ հաշիւ մը ,

որ ամեն Հայու ուշադրութեան ար-
ժանի է . խոտաւանիկ որ մեր գը-
րացի Թուրքերը Հայերէն խիստ յա-
տադէմ են այս հաշուօք , մինչդեռ
անոց եկամուտի տղաքներն ալ
Հայերէն խիստ առատ է ամեն երկրի

Ամենամեծ բարեկարգութիւն մը
կըլլար , եթէ ստիպէին ծնողներն
իրենց զաւակաց համար ուսմունքը
ստիպարական լինել :

Կրկին գրեւա խոտաւան
Ի Հայէպ Միամ յարգանք 2 Երդ-
8 Յունի 1880 Կ . Դաւանեմ

ԷԶՄԻՍՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՐԱԴԻՒՆԸ

Վաղուց է , որ մեր լրագրութիւն-
նը հարց բարձրացրեց , թէ Միայր Ա-
թուի կառավարութիւնը պէտք է
հաշիւ ներկայացնէ աղջիկն , որպէս
այդ ընդունված է մինչև անգամ
պետութիւններ և առ հասարակ
այն հիմնարկութիւններ վերաբերու-
թեամբ , որոնք մի առանձին պա-
տակաւանատու թիւնն ունեն դէպի
ժողովուրդը , և որոնց ու ժողովրդի
մէջ կայ փոխադարձ համաբախ-
թիւն : Լրագրութեան այդ իրաւա-
ցի բողոքը երկար ժամանակ մնաց
առանց հաւանքի , և Էջմիածնի կա-
ռավարութիւնը չարաւանակց յամա-
ռութեամբ ընել : Վերջապէս «Արա-
րատ» ամսագրի հոկտեմբեր ամսի հա-
մարի մէջ , վեհապետ Հայրապետի
հրամանով և անօրինութեամբ տը-
ւած է մի հաշիւ : Բարեւ ենք , որ
ժողովրդի պահանջը , եթէ ոչ կա-
տարեկապէս , դոնէ մասնաւոր բաւա-
կանութիւն ստացաւ : Ասում ենք
մասամբ , որովհետեւ հաշիւը թերի
է : Մենք չեմք խօսում այն բանի վը-
րա , որ հաշիւ մէջ երեւում է այն առ-
ակ խառնափնթիւրութիւն , որ բո-
լորովին զուրկ է կանոնաւոր տօմա-
րակալութեան ճշգրտութիւնից , այլ
այն , որ շատ բաներ մտնի մէջ է
թողնում : Եւ ինչպէս չէ բաւականացը-
նում մեր հարցաւորութիւնը :

Ահա մի մասի մէջն է թերութիւն-
նը .

Միտեալ 1887 թիւ ապրիլի 7ից (այ-
սինքն այն օրից որ վեհ. Հայրապե-
տը մեւտք է դրած Էջմիածնում)
մինչև 1878 թիւը , 11 տարեկայ հա-
շիւները վրա հարեանցօրէն անցնե-
լով , ներկայացրած է միայն անցեալ
1878 թուի լրակաւոր հաշիւը : Իսմ
պէտք էր յիշեալ 11 տարեկայ բո-
լորովին թափել , կամ նրանց երեւո-
տական շրջաբերութիւններ մասին
կանոնաւոր տեղեկութիւն տալ : Բայց
ոչ , Էջմիածնի սկրապուրծութիւններն
երեսն հանելու համար չէր կարելի
բոլորովին բաց թողնել 11 տարեկայ
գոնէ նրանց մէկ կողմ պէտք էր ցոյց
տալ , որ «Արարատ» արտասանու-
թեան համաձայն «գործերը և աշխա-
տութիւնները բարձրաւելին և (ուրիշ-
ներէ) խօսքերը սպառվեցին» . . . Նախ
տեսնենք , թէ ինչ գործեր և աշխա-
տութիւններ են կատարվել այս 11 տա-
րիներ ընթացքում , յետոյ կանց-
նենք 1878 թուի հաշուին :

Յիշեալ 11 տարեկայի հաշիւներին
մէջ մեր ուշադրութիւնը գրաւում
են մի քանի կէտեր : Չամադան չե-
նութիւնների վրայ ծախվել է 159,952
լուրի հաւանալ կարգով :

Ճեմարանի շինութեան և վերա-
շինութեան վրայ 95,319 լուրի , կահ
կարասիքի և գաւազքերի 6,643 լու-
ր , պահարանների շինութեան 12,390 լու-
ր , Գաղղայի տառն 11,314 լուր , Բիւրա-
կանի ամառանոցին 13,040 լուր , ճեմա-
րանի հիւանդանոցին 5,245 լուր , լճի ,
անտառի եւ 15,000 լուր : Գումար 159,
952 լուրի :

Վերջոյ գրեալ խոշոր ծախսերի առ-

ջն մեւտք է ցոյց տուած , որ հաւաք-
վել է ճեմարանի շինութեան և Էջ-
միածնի վերանորոգութիւնների ա-
նունով եղած նախապետութիւննե-
րից 41,645 լուրի :

Եթէ մեւտքը ծախսից դուրս
գտնք , կը նշանակէ , որ Էջմիածնի
մեւտքից աւելի է ծախսել 118,307
լուրի :

Բայց որտեղից է դառել վերջին
գումարը . — կամ պէտք է պարտք
տրած լինի կամ պէտք է ուրիշ ար-
դիւնքներ և մեւտքեր ևս ունեցած
լինի , որոնք ամենին յիշված չեն :
Վերջինը աւելի հաւանական է , որովհ-
հետեւ մեզ յայտնի են մի քանի խո-
շոր գումարներ , որոնք յիշեալ 11
տարեկայ ընթացքում մեւտք են դո-
ծել Էջմիածնի գանձարանում և նը-
րանց մասին ամենին յիշատակու-
թիւն չկայ : Օրինակ , չէ յիշված ճա-
շտեցիկից և ճայնադրեալ շարակաւ-
ներից գալացած փողը , որ մասաւո-
րապէս 200,000 լուրի կը լինի , չէ
յիշված Սեբասիէ եպիսկոպոսի փո-
ղը , որ 70,000 լուրի էր . չէ յիշ-
ուած կարապետ եպիսկոպոսի փողը ,
որ կարծեօք 36,000 լուրի էր .
չէ յիշված Հիւկոստանից միանգամ
թէհրանի Բաւապ գեղաւանատան
միջնորդութեամբ ստացված մի կը-
տակի փող , որ 44,000 լուրի էր .
չէ յիշված Գրիգորիոս եպիսկոպոսի
միջնորդութեամբ դարձեալ Հիւկոստ-
անից ստացված կառնիներ ին-
դերը , որոնց 50,000 ուտիկն միայն
մեզ յայտնի է . չեն յիշված և մի
քանի ուրիշ գումարներ , որոնց ճըշ-
տութիւնը ստուգութեան կարօտ լի-
նելով , թողնում ենք : Իսկ միայն այս
վերջոյ գրեալ բաց թողված մեւտքերի
գումարը լինում է 400,000 լուրի :
Եթէ աւելացնենք դրա վրայ ճեմա-
րանի շինութեան անունով հաւաք-
ուած նախապետութիւնների գո-
մարը 41,645 լուրի , ամբողջը կը լի-
նի 441,645 լուրի :

Աւելին խոշոր խոշոր ծախսերը
մի տա մի գրել հաշուի մէջ , իսկ եւ
կառուաների մեծ մասը բաց թող-
նել , — մի այսպիսի համարաւորու-
թիւնով մենք չենք կարծում որ
զգործերը և աշխատութիւնները կը
բարբառէին , իսկ հասարակութեան
արտաւանջները կը սպառվէին . . .

Ընթերցողը անսուս է , որ վե-
րջիշեալ մեւտքերն այնպիսի պատա-
հական և արատաւոր կարգի տրուե-
ր են , որ ամենին կայ չունեն
Էջմիածնի հաստատ և մշտական ար-
դիւնքների հետ , որոնք , որպէս ե-
րեւում է 1878 թուի հաշուից , Էջմի-
ածնի ընդհանուր ծախսերը լրացը-
նելուց յետոյ , դարձեալ ամեն տա-
րի մօտ 40 հազար լուրի աւելորդ-
փող են թողնում գանձարանին : Գա-
ղղաֆ ուրանալ չէ կարելի , որովհե-
տեւ հաշիւը մեր աչքի առջն է , և
միայն հաշիւն է որ ամբողջապէս
տարված է . (մենք թուանշաններ
հաշու թեան մասին չենք խօսում) :

1878 թուին Էջմիածնի մեւտք է
ունեցել :

Աթուապատկան արդիւնքներից
75,173 լուրի : Վեհապետական ար-
դիւնքներից 22,132 լուրի : Տարա-
րական արդիւնքներից 19,964 լու-
ր : Գումարն 117,271 լուր :

1878 թուին Էջմիածնի միւր
ունեցել . Վեհապետի վրայ 2,619 լու-
ր , տղարանի վրայ 5,922 լուր , վանքի
անտեսութեան վրայ 45,401 լուր , ճե-
մարանի անտեսութեան վրայ 28,131
լուր : Գումարն 79,073 լուրի :

Միտեալ մեւտքից դուրս գալով
մեւտք է զուտ արդիւնք 38,198 լուր :

Միտեալ եւեւեւ ընդ-

